

() Դապարիկ : () օգոստոս Գ :

() ԴԱՊԱՐԻԿ գունտին օգոստոսը ա-
մենուն յայտնի է . աստեւակ ճամբոր-
դութիւններուն առջինը կը սեպուին
օգոստի կողմանէ Պիոյ ու լէյ— իւսաք
բնագէտներուն ըրածները . վասն զի
անոնցմով բնաբանական խոսմունքը
շատ լուսաւորուեցաւ : Վասնապէս
անուանի է ի ոմէին ճամբորդութիւնը,
որ Փարիզի ճիշդ յատակագրութիւնը
առաւ : Ինչպէս որ առաջ ըսինք,
պտրզմներու մէջ ալ օգոստի կրնար
ըլլալ թէ որ վարժ մարդկանց ձեռ-
քովը կատարուէր և ծախքը չափա-
զանց չըլլար :

() Դապարիկը շատ աւելի օգոս-
տի ու գոլարձալի կրնար ըլլալ թէ
որ անիկայ կառավարելուն կերպը
գիտցուէր . վասն զի կը տեսնենք որ
խիստ հանգարտ ատեն ալ վերի օ-
դին մէջ սաստիկ հովեր կ'ըլլան , ո-
րոնց դէմ պատերազմիլը դժուար է .
հապա ինչ պիտի ըլլայ հով ու խռո-
վութիւն եղած ատենը : Իսկէ կ'ի-
մացուի թէ ամէն հնարք փուճ է , և
անկարելի է հովին դէմ դնելը . վասն
զի օդի պէս ամենաշարժուն հեղա-
նիւթ մը կառավարելու համար՝
պէտք է որ անկէ աւելի շուտ շար-
ժող ղեկեր ու թիակներ շինուին .
այսպիսի արագութիւն ալ հնարելու
համար՝ սաստիկ ոյժ պէտք է . աս ու-
ժը առաջ կուգայ մեքենաներով ու
ճախարակներով . իսկ արդ այնչափ ան
համար մեքենաներ վեր հանելու հա-
մար ալ չափէ գուրս մեծ գունտ
պէտք է . գունտն ալ որչափ որ մեծ
ըլլայ՝ այնչափ դիւրաւ հովը կրնայ
զինքը քշել տանիլ . որով ան կառա-
վարող գործիքը կամ ղեկն ալ որ վեր
հանուած մեքենաներովը պիտի շի-
նուէր , բանի չգար՝ ան խոշոր գունտը
քշող հովին դիմացը :

() արմանալին աս է որ երևելի բը-
նաբաններ , ինչպէս են Վոնթէ զօ-
րավարը , Սէօնիէ ու Սոնկուֆիէ ,

և անոնցմէ ետեւ եկողներն ինչուան
հիմա դեռ չեն յուսահատած , թէ
պէտ և ամենուն փորձերն ալ գրեթէ
անյաջող եղած են : 1789ին Սթրա-
նունով մէկը գիրք մը տպեց՝ օդային
ճամբորդութիւններ ընելու վրայ . ա-
սիկայ կ'ըսէ թէ օդապարիկ գունտը
մեծամեծ ձկներու նման շինելու է,
որպէս զի ինչպէս որ ձկները ջրին մէ-
ջը կը լողան՝ այսպէս ալ օդապարիկ-
ները օդին մէջ լողան . բայց ասոր ծախ-
քին շատութեանը , և մանաւանդ
անհիմն բան երևնալուն համար՝ ին-
չուան հիմա դեռ փորձ մը չըրին :
Սոյնպէս անգործ մնաց նաև Պորել-
լին դրութիւնը , որ կ'ըսէր թէ մարդ
կրնայ օդուն մէջ թռչունի մը պէս
թռչիլ : Սերջի ատեններս ալ բոլոր
Փարիզի ժողովրդեան առջև խաղը
եղաւ լէյն անունով մէկը՝ որ կը խոս-
տանար օդուն մէջ թռչելու : Իսկ տե-
սակ ընդհանուր փորձերուն վրայ զատ
խօսիլ ուղեւիով ուրիշ անգամ , հոս
Սրին անունով հռչակաւոր անգղիա-
ցւոյն օդային ճամբորդութիւնները
դնենք՝ ստորագրելով նախ իրեն շի-
նած գունտը :

Սրինին գունտը վերնիճոտած կեր-
պասով շինած է , և մէջը 75,000 խո-
րանարդ ոտնաչափ ջրածին կազ կ'առ-
նէ . գունտին տակէն կախուած նա-
ւակին մէջ տասնուվեց հոգի կրնան
նստիլ , և ամէն ծանրութիւնը մէկ-
տեղ առնելով 4141 լիպրէ կը կշռէ :
Իսկ որ աս գունտը ջրածին կազով
լեցընելու ըլլան՝ կրնայ 28 հոգի և
6400 լիպրէ ծանրութիւն վեր հա-
նել : () Դապարիկը աղէկ ուղղելու
համար՝ նաւակին մէջ նաւախիճի
տեղ դրուած են ամուր գոցուած
պղնձէ սնտուկներ , և 150 ոտք եր-
կայնութեամբ հաստ չուանի մը կա-
պած նաւու երկաթ մը . ուրիշ բարակ
չուան մըն ալ 1000 ոտնաչափ : Երբ-
որ գիշեր ատեն ճամբորդները ծու-
վու վրայ գտնուին , ու գիշերուան
պաղութենէն կազը խտանայ , ան ա-
տեն ծովուն վրայ կ'իջնան , և սնտուկ-

ները ծովը ձգելով՝ նաւակէն չուանով հետերնին կը քաշեն . երբոր առաւօտը կազը անգայտանայ՝ սնտուկները նաւակին մէջ կ'առնեն ու նորէն կը բարձրանան : Իսկ թէ որ գիշերը ցամաքի վրայ գտնուին, ան նաւու երկաթը վար կ'իջեցնեն, և ուզած տեղերնին կը հաստատեն :

Արինին օդապարիկը 18 բթաչափ տրամագծով օդահան գլան մըն ալ ունի, որուն միտոցը ուզած ատենը շարժելով՝ շուտ մը գունտին մէջէն ուզածին չափ կազը կը հանէ . աս օդահանը շատ օգտակար եղած է օդային ճամբորդութեանց մէջ :

Հանդարտ օդու մէջ ալ առաջ երթալու համար, նաւակին երկու կողմը հողմաղացքի թւերուն պէս չորս անիւ դրուած է, որ ինչպէս շոգենաւին առնեն երբ կը պատուեն, այնպէս ասոնք ալ իրենց առանցքին վրայ դառնալով, օդը կը պատուեն՝ ու առաջ կ'երթան . ընթացքը շտկելու համար անկատար ղեկ մըն ալ յարմարցուցած է :

Եւ օդապարիկին արագութիւնը իրաւացի խելքէ վեր բան մըն է . Արին Բերիկայ երթալու ատեն 134 փարսախ տեղը 6 ժամուան մէջ ըրաւ : Իրեն խիստ մեծ ճամբորդութիւնը 1836^{ին} նոյեմբերի 2^{ին} ըրածն է : Եւ օրը՝ որ կէսօրը գրեթէ մէկ ու կէս ժամանցեր էր՝ ինտրային Վոքսհալ ըսուած պարտէզէն ելաւ քանի մը բարեկամներով, և 100 լիպրէ նաւախիճէն զատ՝ շատ մը ճամբու պաշար և արուեստական կրակներ առեր էր, որպէս զի գիշերը վառ է : Վաղղիայի ու Հոլանտայի համար ալ հրամանագիրներ առաւ, որովհետեւ խօսք տուեր էր որ Վանիքայի նեղուցէն անցնելէն ետեւ՝ դէպ 'ի ան կողմերը զարնէ : () Դը խիստ պայծառ էր, միայն արեւմտեան հիւսիսային հով մը կը փչէր . աս հովը զիրենք դէպ 'ի Ոսթենտայի կողմը քշեց : Եւ մը 4^{ին} գունտէն վար անկարգելով նամակ մը իջաւ Տուվրի իշխանին համար . քաղ-

քին բնակիչներն ալ իրիկուան 12^{ին} դիտակով կը տեսնէին Արինին օդապարիկը գոյնզգոյն լուսերով զարդարուած : Վիչ ատենէն ետքը Վաղղիայի ծովեզերքին բնակիչներն ալ տեսան ան լուսաւոր գունտը որ դէպ 'ի Պելճիա կ'երթար : Եւ առաւօտը ժամը 9^{ին} օդապարիկը Հռենոս գետին քովը իջաւ, 450 փարսախ ճամբան 21 ժամուան մէջ ընելով, որ թռչուն մըն ալ չկրնար ընել : Տեղացիք պարոն Արինին յաջողութեամբ հասնիլը լսելուն պէս՝ անոր ընդառաջ գնացին, գունտը կառքերու մէջ դրին, պարոն Արինն ալ մէկտեղ առին Փարիզ տարին, և օդապարիկը Փարիզի երեւելի իջևաններէն մէկուն մէջ դրին որ ժողովուրդը գայ տեսնէ : Կնքեան ճրագալուցին իրիկունը պարոն Արին նորէն մտաւ օդապարիկին մէջ, և 6,000 ոտք բարձրանալէն ետեւ Փարիզի մօտ Վիթրի ըսուած տեղը իջաւ :

Հոս պզտիկ ծանօթութիւն մըն ալ վայրաբեր հովանեակին վրայ տալով, խօսքերնիս լմնցնենք : Եւ գործիքը որ օդապարիկի մակոյկին վրայ յարմարցուցած կ'ըլլայ՝ անոր վար իջնալու ատեն ունեցած սաստիկ ընթացքը մեղմացնելու և օդապարիկով ճամբորդութիւն ընողները վտանգաւոր գահաժիծմունքէ պահելու համար է : Պլանշար գաղղիացին լսելով թէ արեւելքի կողմերը՝ գերիները իրենց տէրերը զուարճացնելու համար բարձր տեղեր կ'ելեն, ու անկէ իրենք զիրենք վար կ'ընեն, և ձեռքերնին մեծկակ հովանոց մը բռնած ըլլալով՝ կամաց կամաց վար կ'իջնան ու չեն փնասուիր, ասկէ մըտածեց որ նոյն բանը օդապարիկներուն վրայ ալ յարմարցնէ . ուստի անկարգելը կամ վայրաբեր հովանեակը հնարողը Պլանշար կը սեպուի :

Եւ կարգելը մեծ հովանոցի ձևով գործիք մըն է իրարու քով կարած՝ 36 մար խեթոտ կերպասէ շինած . ամէն մէկ կարուած տեղերէն մէյմէկ չուան

կարած է, ան չուաններուն մէկալ ծայրերն ալ երկերկու հատը մէկտեղ միացուցած ու նաւակին կապած է, որպէս զի վար իջնալու ատեն օդին բռնութեամբը անկարգելը վեր չը դառնայ: Սէկ ու կէս մեթր շառաւիղով թեթեւ փայտէ համակերօն շրջանակ մըն ալ հաստատած է անկարգելին վրայ, որպէս զի քիչ մը բաց մնայ՝ որ վար իջնալու ատենը մէկէն բացուի: Նաւակին վար իջած ատենը ունեցած սաստիկ ծածանմունքն ալ արգելելու համար՝ անկարգելին կեդրոնը չափաւոր կլորկեկ ծակ մը բացած է, ուսկից որ ճնշուած օդը արագութեամբ դուրս կ'ելլէ: Յայտնի է թէ օդու մէջ ընկած մարմին մը որչափ որ տարածեալ ըլլայ, օդն ալ այնչափ դէմ կը դնէ. և որչափ աւելի մեծ ըլլայ, անկման զօրութիւնն ալ այնչափ կը քիչնայ. ուստի օդի մէջ ընկած մարմնոյ մը արագութիւնը կրնանք ուղածնուս չափ պակսեցընել՝ անոր տարածութիւնը աւելցընելով: Փորձուած է որ հինգ մեթր մեծութիւն ունեցող անկարգելով՝ հարիւր քիլոկրամ ծանրութիւնը աւանահանդարտ կերպով վար կ'իջնայ:

() Դապարիկին վրայ այսչափ խօսելէն ետքը, ուրիշ մանր պարագաներն ու տեղեկութիւնները բնաբաններուն ու բնալոյծներուն կը թողունք. միայն թէ երեւելի նոր գիւտ մըն ալ վրան աւելնայ նէ՝ չենք դանդաղիր ծանուցանելու:

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԴՆՆ : — Յօդուած Բ :

Բնագիւտի պարօնին մէկը շուն մը ունի եղեր որ աչքէն ելեր է աս գէշ սովորութեանը համար, որ կ'երթայ դրացիին ոչխարները կը սպաննէ եղեր: () ր մըն ալ երբոր կը տեսնէ թէ իր դրացին խղղուած ոչխարներէն մէկը

թեւին տակը առեր բերեր է իրեն քանգըտելու, խիստ սրդողելով կը կանչէ ծառաները, կ'ապսպրէ որ ան շունը նոյն օրը սատկեցընեն: () ունը հեռուէն տեսնելով իր խղղած ոչխարը, ու տիրոջը կանչուածութիւն, կ'իմանայ որ բանը գէշ է, կը ձգէ կը փախչի: () ծառաները շատ փնտռելէն ու չգտնելէն ետեւ կ'ըսեն իրենց տիրոջը, թէ կրնայ ըլլալ որ ան հովիւներուն ձեռքը ընկեր է, և անոնք ըսպաններ են. ասով տիրոջը սիրտն ալ կ'իջնայ: Տարի կ'անցնի, աս պարօնը իրեն մէկ ծառային հետ ճամբայ ըրած ատենը՝ յանկարծ այնպիսի անձրևոտ փոթորիկ մը կ'առնէ զինքը, որ պէտք կ'ըլլայ ձիէն վար իջնալ, ու ճամբուն մօտ խեղճ իջեանի պէս տեղ մը մտնել: Ներս մտածին պէս՝ պանդոկապետն ու անոր կնիկը գոյներնին կը նետեն, կը սկսին հետը դողդողալով խօսիլ. պարօնը բանի տեղ չգնելով կը մտնէ ներս կը նստի: Այբոր կը տեսնէ թէ փոթորիկը դադրելէ չունի, իրիկուան մուծն ալ կոխեր է, միտքը կը դնէ որ ան գիշերը հոն պառկի: Այս պարօնը կերակուր ուտելու ատեն՝ մէյմըն ալ իր շունը ան տանը մէջ տեսածին պէս՝ աշխարհք իրեն կ'ըլլայ, կը վազէ կ'երթայ քովը որ սիրէ. բայց շունը ետ կը քաշուի, կ'երթայ դրան մը քով իր պահպանութիւն ընելու: Ատքը երբ որ պառկելու կ'ըլլան, շունը դրան դիմացը կեցած՝ հաջելով թող չտար որ ներս մտնեն. պարօնը կը սկսի շունը առջի անունովը կանչել. կ'իմանայ շունը որ իր տէրն է, կը վազէ քովը, կը սկսի ձեռքը լցուածութիւն բայց ներս մտնել թող չտար. հագուստէն կը խածնէ, անդի սենեակը կ'ուզէ տանիլ: Պարօնն ու ծառան երբոր աս կը տեսնեն՝ կ'ըսեն թէ հոս բան մը կայ, զգուշանալու է. խօսք կը դնեն որ վտանգ մը ըլլայ նէ՝ բարձր ձայնով մէկզմէկ օգնութիւն կանչեն: Ուստի շանը մտիկ չընելով, կը մտնեն երկուքը մէյմէկ սենեակ